ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի 2024 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

Սույնով «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հայտարարում է 2024 թվականի ֆինանսական տարվա արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ: Առաջարկներ կարող են ներկայացնել այն աուդիտորական կազմակերպությունները, որոնք բավարարում են ներքոհիշյալ կետերի պահանջներին.

I. **01.01.2024-31.12.2024թթ ընկած ժամանակահատվածում Ընկերության գործունեությունը պետք է ենթարկվի արտաքին աուդիտի, որի բնագավառներն են.**

1. Տարեկան հրապարակվող հաշվետվությունները (համաձայն IFRS),
2. Ներքին կանոնակարգեր, հիմնադիր փաստաթղթեր և ընթացիկ փաստաթղթաշրջանառություն
3. Ակտիվների և պարտավորությունների, սեփական կապիտալի հաշվառում
4. Հաշվապահական հաշվառման համապատասխանություն գործող օրենսդրությանը

II. **Աուդիտորական կազմակերպությունների կողմից ներկայացվող առաջարկներում պետք է առնվազն ներառվեն.**

1. Աուդիտորական կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը և կապի միջոցները:
2. Աուդիտորական ծառայությունների մատուցման լիցենզիայի պատճենը,
3. Պատասխանատու աուդիտորի և աուդիտորական խմբում ընդգրկված այլ աշխատակիցների՝ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի կամ ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորման փաստը հավատող փաստաթղթերի պատճենները (առկայության դեպքում):
4. Պատասխանատու աուդիտորի և աուդիտորական խմբում ընդգրկված այլ աշխատակիցների միջազգային հաշվապահական և/կամ աուդիտորական որոկավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ,Սի-Փի-Էյ, Սի-Էյ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթերի պատճենները (առկայության դեպքում):
5. Աուդիտորական աշխատանքների կատարման ժամկետը և գինը
6. Պարտավորագիր այն մասին, որ Ընկերորության կողմից ընտրվելու դեպքում աուդիտորական կազմակերպությունը պարտավոր է Ընկերության հետ կնքել աուդիտի իրականացան պայմանագրի առաջարկում նշված գնով և պայմաններով

III. **Աուդիտորական կազմակերպությունը պետք է բավարարի հետևյալ չափանիշներին.**

1. Պետք է ունենա ֆինանասական կազմակերպության աուդիտի իրականացման առնվազն 3 տարվա փորձ, ընդ որում այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական խոշոր 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպությունների վրա,
2. Աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և/կամ աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ,Սի-Փի-Էյ, Սի-Էյ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի կամ ՀՀ կռավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,
3. Աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա աուդիտորական կազմակերպութունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի կամ ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,
4. Աուդիտորական կազմակերպությունը Ընկերության հետ կնքվող պայմանագրով համաձայնություն է տալիս ԿԲ հրավերով մասնակցելու ընկերության, աուդիտորական կազմակերպության և ԿԲ-ի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ համդիպմանը:

Առաջարկի փաթեթը կարող է 18.11.24-ից 18.12.24թթ.-ը ներառյալ, թղթային տեսքով ներկայացվել Ընկերության գրասենյակ՝ Փավստոս Բուզանդի փող., 15 շենք, 24-25 տարածք կամ էլեկտրոնային տեսքով info@inviabroker.com էլ. փոստին:
Առաջարկը պետք է պարունակի տեղեկատվություն աուդիտի պայամագիրը մեկ, երկու և երեք տարով կնքելու դեպքերը մասով:
Առաջարկի կազմման հետ կապված լրացուցիչ տեղեկություն ստանալու համար կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով +374 10 303377, ինչպես նաև գրել հետևյալ info@inviabroker.com էլ փոստին:

«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝
18.11.2024

Անահիտ Շաքարյան